



«ՀԱԿԿ» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը
առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Դուսյա Մարգարյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի միջնակարգ
դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը
առարկայի դասավանդման գործընթացում

Հարց՝ Կարո՞ղ է պրոբլեմային ուսուցումը կերտել կյանքին ավելի պատրաստված
անհատ:

Բովանդակություն

1.	Ներածություն	
2.	Պրոբլեմային ուսուցման տեսական հիմունքները -----	4
3.	Ուսումնական խնդրի առաջադրման կանոնները -----	11
4.	Պրոբլեմային ուսուցման մեթոդների համակարգը -----	13
5.	Պրոբլեմային դասի կառուցվածքը -----	15
6.	Եզրակացություն -----	16
7.	Օգտագործված գրականության ցանկ -----	17

Ներածություն

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում մասնակի որոնողական հետազոտական մեթոդներ, ինքնուրույն ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի: Եթե դպրոցի առաջ խնդիր է դրված զարգացնել սովորողների մտածողությունը, նրանց ստեղծագործական ունակությունները, ապա մանկավարժորեն ճիշտ կազմակերպված ուսուցումը չի կարող լինել ոչ պրոբլեմային:

Խնդրի էության պարզաբանումը բացեց նոր հնարավորություններ սովորողների ուսուցաճանաչողական գործունեության ճանապարհին:

Պրոբլեմայինի սկզբունքը արտացոլվում է ուսումնական գործընթացի կառուցման տրամաբանության մեջ, ուսումնասիրվող նյութի բովանդակության մեջ, սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդներում և դրանց կառավարման մեջ, դասի կառուցվածքի մեջ և ուսուցչի կողմից սովորողների գործունեության և արդյունքի վերահսկման ձևերի գործընթացում: Եթե ուսուցիչը լավ յուրացնի պրոբլեմային ուսուցման գործընթացի կազմակերպման բովանդակությունը և էությունը, տիրապետի ձևերին, մեթոդներին և ուսուցման տեխնիկական միջոցներին ու համակարգված օգտագործի պրակտիկայում, ապա կհասնի հաջողությունների:

Ուսուցչի դիդակտիկ լավ պատրաստվածությունն այսօր հատկապես կարևոր է, որովհետև առանց ընդհանուր տեսությունն իմանալու անհնար է ստեղծել, իսկ ուսուցման գործընթացը արվեստ է, արվեստ գերել երեխաներին քո առարկայով, զարմացնել մտքի գեղեցկությամբ, գիտելիքով, խրախուսել ինքնուրույն մտածողությունը:

Աշխատանքի նպատակն է բացահայտել պրոբլեմային ուսուցման արդիականությունը և արդյունավետությունը: Խնդիրներն են ներկայացնել պրեբլեմային ուսուցման հիմունքները: Բացատրել խնդրի առաջադրման կանոնները: Անդրադառնալ պրոբլեմային ուսուցման մեթոդների համակարգին:

Պրոբլեմային ուսուցման տեսական հիմունքները՝

Մեր դպրոցների խնդիրն է հանդիսանում ձևավորել ներդաշնակորեն զարգացած անհատականություններ:

Բազմակողմանիորեն և ներդաշնակ զարգացած անհատի կարևորագույն ցուցանիշ է մտածողական կարողությունների բարձր մակարդակի առկայությունը: Եթե ուսուցումը տանում է ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ապա այն կարելի է համարել զարգացնող ուսուցում, այսինքն այնպիսի ուսուցում, որի ընթացքում ուսուցիչը, հենվելով մտածողության զարգացման օրինաչափությունների իմացության վրա, իր առարկայի ուսուցման գործընթացում մանկավարժական հատուկ միջոցներով նպատակաուղղված աշխատանք է իրականացնում, որն ուղղված է իր աշակերտների մտածողության կարողությունների և ճանաչողական կարիքների ձևավորմանը: Այդպիսի ուսուցումը հանդիսանում է պրոբլեմային:

Ուսուցման տեսության բազմաթիվ ժամանակակից հրատարակումներ կապված են ուսուցման գործընթացի ակտիվացման և սովորողների ուսումնական գործունեության հետ:

Հեղինակները խոսում են պրոբլեմային ուսուցմամբ ակտիվացման մասին՝ նաև

հասկանալով պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և ճանաչողական խնդիրների կազմումը:

Պրոբլեմային ուսումնական միջոցով ակտիվացման նպատակը կայանում է նրանում, որպեսզի հասկանանք հասկացությունների յուրացման մակարդակը, սովորեցնենք սեփական մտքերը տրամաբանորեն ճիշտ հաջորդականությամբ շարադրել և օգնել լուծելու կարծրատիպային խնդիրները: Այս գործընթացի իմաստը կայանում է նրանում, որ աշակերտը, վերլուծելով, համեմատելով, ամփոփելով, կոնկրետացնելով փաստացի նյութը, ինքնուրույն ստանա նրանից նոր տեղեկատվությունը: Այլ խոսքով, սա գիտելիքների խորացում և ընդլայնում է ավելի վաղ յուրացրած իմացությունների շնորհիվ կամ էլ՝ հին գիտելիքների նոր կիրառում: Նախկին գիտելիքների նոր կիրառումը չի կարող տալ ուսուցիչը, այն փնտրում և գտնում է աշակերտը, ով հայտնվել է համապատասխան իրավիճակի մեջ: Հենց սա էլ համարվում է ուսուցման որոնողական մեթոդ:

Մտավոր որոնումը բարդ գործընթաց է, այն, որպես կանոն, սկսվում է խնդրահարույց իրավիճակից, խնդրից: Բայց ամեն որոնում չէ, որ կախված է խնդրի առաջացումից: Եթե

ուսուցիչը աշակերտներին հանձնարարություն է տալիս նշելով, թե ինչպես այն կատարեն, այդ ժամանակ անգամ ինքնուրույն որոնումը խնդրի լուծում չի լինի:

Սովորողների իրական ակտիվացումը բնութագրվում է խնդրի լուծման ճանապարհների ինքնուրույն որոնումով: Եթե որոնումն նպատակ ունի լուծելու ուսումնառության տեսական, տեխնիկական, գործնական խնդիրները կամ գեղարվեստական պատկերման ձևերն ու մեթոդները, ապա այն փոխակերպվում է պրոբլեմային ուսուցման:

Պրոբլեմային և ավանդական ուսուցման միջև գլխավոր տարբերությունը մենք տեսնում ենք երկու դեպքում. դրանք տարբերվում են ըստ նպատակի և մանկավարժական գործընթացի կազմակերպման սկզբունքների:

Պրոբլեմային ուսուցման նպատակն է ոչ միայն գիտական ճանաչողության արդյունքների յուրացումը, այլև այդ գործընթացի ճանապարհին ստանալ արդյունքները, նպաստել սովորողի ճանաչողական ինքնագործունեության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ավանդական ուսուցման նպատակն է գիտական ճանաչման արդյունքների յուրացումը, սովորողներին գիտելիքներով զինելը, նրանց համապատասխան կարողությունների և հմտությունների մեջ առաջնորդելը:

Ուսուցչի կողմից բացատրանկարագրական ուսուցման կազմակերպման հիմքում ընկած է սովորողներին գիտության պատրաստի եզրակացությունների փոխանցումը: Պրոբլեմային ուսուցման կազմակերպման նպատակի հիմքում ընկած է աշակերտի ուսուցաճանաչողական գործընթացի որոնողական սկզբունքը, այսինքն նրանց առաջ գիտական եզրակացությունների բացումը, գործողությունների եղանակները, նոր առարկաների գյուտը և գիտելիքները պրակտիկայում օգտագործելու եղանակները:

Պրոբլեմային ուսուցման ժամանակ ուսուցչի աշխատանքը կայանում է նրանում, որ նա առավել մանրամասնորեն բացատրի բարդ հասկացությունները, հայտնի սովորողներին գործոնները և կազմակերպի նրանց ուսումնաճանաչողական գործունեությունը: Արդյունքում սովորողներն ինքնուրույն եզրակացություններ են անում այդ ամենի հիմքի վրա և ուսուցչի օգնությամբ ձևակերպում են կանոնները և օրենքները:

Արդյունքում սովորողների մոտ արտադրվում են մտավոր գործողությունների

հմտություն, գիտելիքի փոխանցման կարողություն, զարգանում է ուշադրությունը,

կամքը, ստեղծագործական երևակայությունը:

Պրոբլեմային դասավանդումը ուսուցչի կողմից խնդրահարույց իրավիճակների ստեղծման համակարգն է, ուսումնական նյութի ամփոփումն է ուսուցչի մեկնաբանություններով և աշակերտներին ճիշտ ուղղորդումն է, որը պետք է նպաստի նոր նյութի ընկալմանը և խնդիրների ինքնուրույն լուծմանը:

Պրոբլեմային ընկալումը սովորողների ուսումնաճանաչողական գործընթացն է գիտելիքների յուրացման և գործունեության եղանակների վերաբերյալ, որը կատարվում է խնդրահարույց իրավիճակներում ուսուցչի բացատրությունների հիման վրա: Դրա արդյունքում աշակերտի մոտ զարգանում են խնդրահարույց իրավիճակների ինքնուրույն վերլուծելու, խնդիրները ձևակերպելու և դրանց լուծման տարբերակները գտնելու, ինչպես նաև լուծման իրենց ընտրած ճիշտ տարբերակը ապացուցելու կարողություն:

Պրոբլեմային իրավիճակը մարդու համար ստեղծում է մտավոր դժվարություն , որն ի հայտ է գալիս, երբ նա չգիտի՝ ինչպես բացատրել ստեղծված երևույթը, փաստը:

Իրականացման գործընթացում չի կարողանում հասնել իրեն ծանոթ նպատակին, և դա դրդում է փնտրել այդ երևույթը բացատրելու նոր ձև:

Պրոբլեմային իրավիճակը խնդիր է, խնդրի լուծման միջոցների փնտրտուք և վերջապես՝ խնդրի լուծում:

Խնդրահարույց իրավիճակների առաջացման և դրանց լուծման մտավոր գործունեության ամբողջական ցիկլն ունի մի քանի փուլ.

1. Խնդրահարույց իրավիճակի ստեղծում,
2. Դժվարության էության գիտակցում և խնդրի ներկայացում,
3. Լուծման եղանակի առաջադրում կամ առաջ քաշած ենթադրությունների ապացուցում և հիմնավորում
4. Լուծված խնդրի ստուգում:

Պրոբլեմային ուսուցման ընդհանուր գործառույթները՝

- Սովորողների կողմից գիտելիքների համակարգի և գործնական կիրառության ընկալում,
- Աշակերտների ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական

կարողությունների զարգացում,

- Դպրոցականների խոսքա-նյութական մտածողության ձևավորում: Բացի այդ պրոբլեմային ուսուցումն ունի հատուկ գործառույթներ՝
- Գիտելիքի ստեղծագործական ընկալման հմտության դաստիարակում,
- Գիտելիքի ստեղծագործական կիրառման հմտության դաստիարակում և ուսումնական խնդիրների լուծման կարողություն,
- Ստեղծագործական գործունեության փորձի ձևավորում և կուտակում:

Հարցադրումները խթանում են սովորողների մտավոր գործունեությանը: Ուսուցչի հարցը պետք է լինի այնքան դժվար, որ սովորողների մոտ դժվարություն առաջացնի, և միևնույն ժամանակ նրանց դրդի պատասխանն ինքնուրույն գտնելու:

Խնդրահարույց առաջադրանքը, ի տարբերություն սովորական ուսումնական առաջադրանքի, պարզապես որևէ իրավիճակի բնութագիր չէ:

Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, հնարավոր է առանձնացնել մանկավարժական գործունեությանն ավելի բնորոշ պրոբլեմային իրավիճակների տեսակներ, որոնք ընդհանուր են բոլոր առարկաների համար:

Առաջին տեսակ. պրոբլեմային իրավիճակն առաջանում է այն դեպքում, եթե սովորողները չգիտեն տրված խնդրի լուծման ձևերը, չեն կարողանում պատասխանել պրոբլեմային հարցին, չեն կարող տալ ուսումնական կամ էլ առօրյա կյանքին վերաբերող փաստի բացատրություններ:

Երկրորդ տեսակ. պրոբլեմային իրավիճակներն առաջանում են, երբ սովորողները բախվում են մի խնդրի, որի դեպքում պետք է իրենց՝ նակիևում սովորած նյութը օգտագործեն գործնական նոր պայմաններում:

Երրորդ տեսակ. պրոբլեմային իրավիճակը հեշտորեն առաջանում է այն դեպքում, երբ հակասություն կա խնդրի տեսականորեն լուծման ճանապարհի և ընտրած միջոցի գործնականորեն անհամատեղելի լինելու միջև:

Չորրորդ տեսակ. պրոբլեմային իրավիճակն առաջանում է, երբ կան հակասություններ կատարված առաջադրանքի ձևով բերված արդյունքի և սովորողների՝ այդ արդյունքը հիմնավորելու տեսական գիտելիքների միջև:

Պրոբլեմային ուսուցման տեսական հիմունքները

Առաջին եղանակ – սովորողներին դրդել երևույթների տեսական բացատրությանը: Այն նպաստում է սովորողների որոնողական գործունեությանը և տանում է դեպի նոր գիտելիքների ակտիվ յուրացման:

Երկրորդ եղանակ – ուսումնական և կյանքի իրավիճակների օգտագործումն է, որոնք առաջանում են դպրոցում՝ գործնական աշխատանք կատարելիս, տանը, բնության երևույթները դիտարկելիս և այլն: Պրոբլեմային իրավիճակն առաջանում է, երբ սովորողները փորձում են ինքնուրույն հասնել իրենց առջև դրված գործնական նպատակին:

Երրորդ եղանակ – ուսումնական պրոբլեմային առաջադրանքների տեղաբաշխումը երևույթների բացատրության կամ գործնական լուծման ուղիների վրա: Որպես օրինակ կարող է ծառայել սովորողի ցանկացած հետազոտական աշխատանք ուսումնափորձնական բնագավառում, արհեստանոցում և այլն:

Չորրորդ եղանակ – աշակերտներին հուշել կատարել փաստերի և իրական երևույթների վերլուծություն և գտնել այդ փաստերի կենսական և գիտական պատկերացումների հակասությունը:

Հինգերորդ եղանակ – առաջարկի առաջադրում, եզրակացությունների ձևակերպում և դրանց ստուգում:

Վեցերորդ եղանակ – սովորողներին դրդել համեմատելու և հակադրելու փաստերը, երևույթները, կանոնները, որոնց արդյունքում տեղծվում է պրոբլեմային իրավիճակ:

Յոթերորդ եղանակ – սովորողներին դրդել նոր փաստերի նախնական ընդհանրացմանը: Սովորողներն առաջադրանք են ստանում վերանայել որոշ փաստեր,

երևույթներ, որոնք տեղ են գտել իրենց համար նոր նյութի մեջ, համեմատել դրանք արդեն իրենց ծանոթ նյութի հետ և ինքնուրույն ամփոփել:

Ութերորդ եղանակ – միջառարկայական կապերի ստեղծում: Հաճախ ուսուցման նյութը պրոբլեմային իրավիճակ չի ստեղծում: Այդ դեպքում հարկավոր է օգտագործել փաստեր և գիտական տվյալներ, որոնք կապ ունեն թեմայի ուսումնասիրման հետ:

Իններորդ եղանակ – տարատեսակ առաջադրանքներ, հարցի ձևակերպում:

Ուսումնական խնդրի առաջադրման կանոնները

Ուսումնական խնդիրների առաջադրման գործընթացը պահանջում է ոչ միայն տրամաբանական – հոգեբանական և լեզվաբանական գիտելիքներ, այլև խնդրի առաջադրման դիդակտիկ կանոններ:

Ուսուցիչը, իմանալով իր աշակերտների պատրաստվածության աստիճանը և ելնելով ուսուցման առանձնահատկություններից, կարող է նրանց առաջ դնել արդեն նրանց հանդիպած խնդիրը: Ընդ որում նա հաշվի է առնում հետևյալը՝

ա/ նախկինում լուծած խնդիրների մեթոդը կարելի է կիրառել նոր բարդ խնդիրների լուծման ընթացքում,

բ/ նախկինում հանդիպած, բայց բավարար գիտելիքներ չունենալու պատճառով չլուծած խնդիրները ամրացնում են սովորողների հետաքրքրությունը առարկայի հանդեպ,

համոզում է նրանց, որ ոչ ուսումնական խնդիրները հաղթահարելի են: Դրա համար հարկավոր է ունենալ ավելի շատ գիտելիք,

գ/ դասարանի՝ նախկինում լուծած խնդրի առաջադրումը մեկ այլ ձևակերպմամբ անցած նյութի կրկնվելու դեպքում ստեղծագործական աշխատանքի հնարավորություն է տալիս,

դ/ նախկինում խմբով լուծած խնդիրները կարելի է օգտագործել նորից հանձնարարելով թույլ կարողությունների տեր աշակերտներին, որպեսզի ինքնուրույն լուծեն դրանք:

Պրորլեմային ուսուցման մեթոդների համակարգը

Ընդհանուր մեթոդների համակարգը՝

1. Բացատրա – պատկերավոր,
2. Վերարտադրողական,
3. Խնդրահարույց շարադրանք,

4. Մասամբ որոնողական,
5. Հետազոտական մեթոդ

Ընդհանուր առմամբ կարելի է խոսել դիդակտիկ վեց միջոցների մասին պրոբլեմային ուսուցման կազմակերպման հարցում, որոնք իրենցից ներկայացնում են ուսուցչի կողմից ուսումնական նյութի ամփոփման երեք տեսակ և նրա կողմից սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման երեք տեսակ.

1. Մենախոսության,
2. Դատողության,
3. Երկխոսության
4. Ստեղծագործական
5. Հետազոտական
6. Առաջադրանքների ծրագրավորման մեթոդ:

Մենախոսության մեթոդ

Մենախոսության մեթոդի դեպքում ուսուցիչը ինքն է բացատրում նոր

հասկացությունների, փաստերի էությունը, սովորողներին տալիս է գիտության պատրաստի եզրակացություններ, բայց դա կատարվում է պրոբլեմային իրավիճակների պայմաններում: Ամփոփման ձևն է՝ պատմել, դասախոսություն:

Դատողության մեթոդ

Առաջին տարբերակն է ստեղծել պրոբլեմային իրավիճակ, որտեղ ուսուցիչը վերլուծում է փաստացի նյութը, հետևություններ և ամփոփում է անում:

Երկրորդ տարբերակ – թեման հայտարարելը ուսուցիչը փորձում է փնտրտուքի և բացահայտման միջոցով: Այսինքն նա՝ գիտական փնտրտուքի համար ստեղծում է արհեստական տրամաբանություն դատողությունների կառուցման ճանապարհով: Ամփոփման ձևը զրույցն է և դասախոսությունը:

Երկխոսության մեթոդ

Այն իրենից ներկայացնում է ուսուցչի և սովորողների միջև երկխոսություն: Ուսուցիչն իր իսկ ստեղծած պրոբլեմային իրավիճակում հենց ինքն է անում հարցադրումը և ինքն էլ լուծում է այն, բայց աշակերտների օգնությամբ: Այսինքն՝ նրանք ակտիվորեն մասնակցում են խնդրի առաջադրմանը, ենթադրությունների առաջ քաշմանը և խնդրի ապացուցմանը: Այս մեթոդի հիմքում ընկած են որոշողական գրույցը և պատմելը:

Ստեղծագործական մեթոդ

Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ նոր օրենքի, կանոնի բացահայտումը կատարվում է ոչ թե ուսուցչի կողմից, այլ՝ սովորողների՝ ուսուցչի գլխավորությամբ և աջակցությամբ: Այս տեսակի մեթոդի իրականացումը հանդիսանում է ստեղծագործական գրույցի և պրոբլեմային խնդիրների լուծման համադրություն:

Հետազոտական խնդիրների մեթոդ

Այս մեթոդը կազմակերպվում է ուսուցչի կողմից տեսական և գործնական հետազոտական խնդիրներ առաջադրելով, որոնք ունեն խնդիրների բարձր մակարդակ:

Սովորողն ինքնուրույն է կատարում տրամաբանական գործողություններ՝ բացահայտելով նոր հասկացության էությունը և գործողության նոր եղանակը:

Կազմակերպման ձևով հետազոտական աշխատանքները կարող են լինել բազմազան՝ աշակերտական փորձ, էքսկուրսիա և փաստերի հավաքագրում, բնակչության հետ, գրույցներ, զեկույցի պատրաստում, ձևավորում:

Առաջադրանքների ձևավորման մեթոդ

Սա մեթոդ է, որի ժամանակ սովորողները, հատուկ ձևով պատրաստված ցուցադրական միջոցների օգնությամբ, կարող են ձեռք բերել նոր գիտելիքներ:

Ուսուցման երկակի մեթոդները

Դասավանդման մեթոդներ

1. Հաղորդող
2. Բացատրական
3. Հրահանգող
4. Բացատրական-հուշող
5. Հուշող

Ուսուցման մեթոդներ

1. Ներկայացնող
2. Վերարտադրողական
3. Գործնական
4. Մասնակի- որոնողական
5. Որոնողական

Ուսուցման **հաղորդող** մեթոդն իրենից ներկայացնում է հնարքների համակարգ, որն ապահովում է ուսուցչի կողմից փաստերի կամ եզրակացությունների հաղորդումն առանց դրանք բավականաչափ բացատրելու, ամփոփելու և կանոնակարգելու:

Ուսուցման **ներկայացնող** մեթոդն իրենից ներկայացնում է հնարքների համակարգ, որը բնութագրում է դպրոցականների ուսումնական գործունեությունը՝ օգտագործելով նախկինում ձեռք բերած գիտելիքները: Այս մեթոդը ենթադրում է լսել ուսուցչի պատմածը, առանց քննադատական վերլուծության սովորել ուսուցչի կողմից առաջ քաշված փաստերը և եզրակացությունները:

Բացատրական մեթոդը կազմված է հնարքների համակարգից, որն իր մեջ ներառում է ուսուցչի կողմից՝ տվյալ գիտության փաստերի հաղորդումը և ամփոփումը, դրանց բնութագրումն ու բացատրությունը:

Ուսուցման **վերարտադրողական** մեթոդն այնպիսի հնարքների համակարգ է, ինչպիսիք են իմաստավորում, ընկալում, դիտարկում, փաստերի համակարգում, տիպային խնդիրների լուծում, վերլուծություն և այլն: Օգտագործվում է տեսական գիտելիքների յուրացումն իմաստավորելու, հմտությունների և կարողությունների մշակման համար:

Հրահանգող մեթոդի դեպքում ուսուցիչը հրահանգում է սովորողներին, թե ինչ է պետք անել և ցույց է տալիս, թե ինչպես է պետք անել: Օգտագործվում է սովորողների գործնական աշխատանքի կազմակերպման համար:

Ուսուցման **գործնական** մեթոդն իրենից ներկայացնում է սովորողների գործնական և ֆիզիկական աշխատանքը որպես գործունեության հիմնական տեսակ: Այսպիսի մեթոդը հնարքների համակցություն է.

1. առարկաների պատրաստման գործնական գիտելիքների մշակում կամ դրանց մշակումը կատարելագործելու և փոփոխելու համար,
2. գործընթացներ, որոնք կապված են տեխնիկական մոդելավորման և դիզայնի, ռացիոնալացման և գյուտի հետ:

Բացատրական-հուշող մեթոդն իրենից ներկայացնում է մի համակարգ, որը բացատրության հնարքների միջոցով սովորողին մոտիվացնում է սեփական ուժերով կատարել որևէ որոնողական աշխատանք: Ուսումնական նյութը մասամբ բացատրում է ուսուցիչը, մասամբ էլ աշակերտն է հաղորդում այն որևէ պրոբլեմային խնդրի լուծմամբ, հարցերի, ինքնուրույն աշխատանքների միջոցով, որը նպաստում է նոր գիտելիքների բացահայտմանը:

Ուսուցման **մասնակի-որոնողական** մեթոդը հանդիսանում է ուսուցչի կողմից բացատրածի և աշակերտի՝ ինքնուրույն ձեռք բերած գիտելիքի համաձուլում: Այստեղ ուսանելու գերակշռող հնարքը լսելն է և ընկալումը, փաստերի վերլուծությունը, հաջորդականությունը, խնդիրների լուծման որոնումը:

Հուշող մեթոդը ուսուցչի կողմից այն գործունեությունն է, որն արթնացնում է սովորողների մտավոր գործունեության ակտիվությունը:

Ուսուցման **որոնողական** մեթոդն իրենից ներկայացնում է մտավոր գործողություններ, որոնք նպաստում են խնդրի ձևավորմանը և այդ խնդրի լուծումը գտնելուն:

Դասի կառուցվածքը հիմնականում ընկած է թեմատիկ և օրվա պլանի հիմքում, որոնք ձևավորում են դասի տրամաբանական վերլուծությունը:

Դասի կառուցվածք ասելով հասկանում ենք համագործակցության տարբեր տեսակներ բաղադրության տարրերի միջև, որոնք առաջանում են այդ առարկայի գործունեության ընթացքում:

Պրոբլեմային դասի կառուցվածքի տարրերը

1. Նախկինում ձեռք բերած գիտելիքների արդիականացում,
2. Նոր գիտելիքների և գործունեության ձևերի յուրացում,
3. Կարողությունների և հմտությունների ձևավորում:

Այդ կառուցվածքը արտացոլում է հիմնական փուլերը և ժամանակակից դասի կազմակերպման փուլերը:

Քանի որ խնդրահարույց դասի ցուցանիշ է համարվում նրա որոնողական գործունեության կառուցվածքի փուլերը, ուրեմն բնական է, որ դրանք ներկայացնում են պրոբլեմային դասի կառուցվածքի ներքին մասը.

1. Պրոբլեմային իրավիճակի առաջացումը և խնդրի ձևակերպումը,
2. Ենթադրությունների առաջադրում և դրանց հիմնավորում,
3. Ենթադրությունների ապացուցում,
4. Խնդիրները ճիշտ լուծելու ստուգում :

Պրոբլեմային դասի կառուցվածքը, որն իրենից ներկայացնում է ուսուցման պրոցեսի արտաքին և ներքին տարրերի միաձուլում, հնարավորություն է ստեղծում կառավարել աշակերտի ինքնուրույն ուսուցման գործընթացը:

Եզրակացություն

Ծանոթանալով Մախաուտովայիⁱⁱ և այլոց աշխատանքներին՝ եկանք այն

Եզրակացության, որ մարդկային զարգացման տվյալ փուլում պրոբլեմային ուսուցումն ուղղակի անհրաժեշտ է, քանի որ պրոբլեմային ուսուցումը ձևավորում է ներդաշնակորեն զարգացած ստեղծագործ անհատ, ով ի վիճակի է տրամաբանորեն մտածել, տարբեր պրոբլեմային իրավիճակներում ընդունել որոշումներ, կանոնակարգել և կուտակել

գիտելիքներ, ընդունակ է ինքնավերլուծության, ինքնազարգացման և շտկումների:

Երեխայի առաջ անընդհատ պրոբլեմային իրավիճակներ դնելը հանգեցնում է նրան, որ նա չի շրջանցում այդպիսի իրավիճակները, այլ ձգտում է դրանք լուծել: Այսպիսով, մենք գործ ունենք ստեղծագործ անհատի հետ, ով միշտ ի գործ է որոնել:

Ուրեմն կյանք մտնելով՝ երեխան կլինի սթրեսներից ավելի պաշտպանված:

Օգտագործված գրականության ցանկ

○Յու. Ամիրջանյան <<Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը>> 1985

○Վ.Ն. Մակսիմովա «Պրոբլեմային մոտեցում դպրոցի ուսուցմանը» 1973թ.

○Մ.Ի. Մախմուտով «Պրոբլեմային ուսուցման կազմակերպում» 1977թ.

○Ա.Մ. Մասյուշկին «Պրոբլեմային իրավիճակներ մտածողության և ուսուցման մեջ»
1972թ.Համացանց

○ⁱ Top-technologies.ru

○ⁱⁱ Մ.Ի. Մախմուտովա «Պրոբլեմային ուսուցման կազմակերպում» 1977թ.